Սիւրիական ծովեզերքը, այլ եւ Ալեքսանդրետը, մանաւանդ եթէ Զմիւռնիան բաժին հանուի Յունաստանին»․ (*էջ* 113)*)։

Ինչպէս քիչ յետոյ աւելի եւս պարզ կը տեսնենք, եթէ Ռուսաստանը վերեւից էր պատրաստւում յօշոտել Հայաստանի մարմինը, Ֆրանսան նոյն մարմինը ձգտում էր լափել վարից։

1915 *թ․ Մարտ* 1–14–*ին Պետերբուրգի ֆրանսական դեսպան Պալէոլոգը հեռագրում է Սազոնովին, որը այդ ժամանակ գտնւում էր ռազմաճակատում, ցարի մօտ․*

«Երախտապարտ կը լինէի Ձերդ գերազանցութեան, եթէ հաճէիք հաղորդել ի գիտութիւն, նորին կայսերական մեծութեան, որ հանրապետութեան կառավարութիւնը, Թիւրքիային ներկայացուելիք հաշտութեան պայմանները քննելուց յետոյ, կամենում է գրաւել Սիւրիան, մէջը առնելով Ալեքսանդրետի ծոցի շրջանը, եւ Կիլիկիան մինչեւ Տաւրոսի լեռնաշղթան։ Երջանիկ կը լինէի անյապաղ վստահացնել իմ կառավարութիւնը, որ նորին կայսերական մեծութիւնը համաձայն *է նոյն բաղձանքին»․* (*էջ* 127)։

Այս առթիւ, արտաքին գործոց նախարարի օգնական Ա․ Ներատովը խորհուրդ է տալիս Սազոնովին, թէ՝ «իր կարծիքով անհրաժեշտ է գիտել տալ ֆրանսացիներին, որ հայերը, մեր տեղեկութիւններով, երազում են հայերով բնակուած Մերսինի եւ շրջանի մասին, եւ որ այդ վայրերը ֆրանսական պահանջների մէջ մտցնելը կարող է հայերի մէջ առաջ բերել հիասթափում Ֆրանսայի նկատմամբ։ Պէտք է բացատրենք ֆրանսացիներին, որ մենք հրաւիրում ենք իրենց ուշադրութիւնը այս բանի վրայ այն նպատակով, որ ապագային չմեղադրեն մեզ, թէ ժամանակին տեղեակ չենք դարձրել հայկական բաղձանքների մասին»։

Իբրեւ եզրակացութիւն, սակայն, Ներատովը կարծում է, թէ «պէտք է յայտարարել ֆրանսացիներին, որ եթէ Ֆրանսան իրեն համար նկատէ կարեւոր ու անհրաժեշտ Մերսինի կցումը, մենք, ի հարկէ, արգելք չենք հանդիսանայ»․ (128)։

«Հայկական բաղձանքները», հարկաւ, Ֆրանսայի համար կարեւոր հանգամանք չէին, եւ Մարտ 3–16–*ին Պալէոլոգը շտապում է գլխաւոր հրամանատարի կայանը, Ցարի մօտ, եւ յանուն իր կառավարութեան խնդրում է Ռուսաստանի հաւանութիւնը, որ Ֆրանսան գրաւէ Սիւրիան ու Կիլիկիան։ Այդ հաւանութիւնը ցարը տալիս է՝ պայման դնելով, որ Պաղեստինը Սիւրիայի մէջ չմտնի եւ «Սուրբ Վայրերի» համար ստեղծուի առանձին վիճակ։ Ֆրանսան, ի հարկէ, չի պնդում Պաղեստինի վրայ, թէեւ ֆրանսական արտաքին գործոց նախարար Դելկասէն դիւանագիտօրէն պատասխանում է, թէ «Սուրբ Վայրերի հարցը պահանջում է առանձին եւ աւելի ուշադիր քննութիւն»․* (130)։

* * *

Այսպէս, ուրեմն, տակաւին 1915 *թ․ Մարտին Ֆրանսայի համար հաստատ վճիռ էր՝ գրաւել Կիլիկիան, մինչեւ «Տաւրոսի լեռնաշղթան», այսինքն՝ ամբողջ Մալաթիայի շրջանն ու Խարբերդի էլ մի մասը։ Իսկ նոյն միջոցին Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը Փարիզում եւ Ազգ․ Բիւրօն Թիֆլիսում «վեց վիլայէթների եւ նրանց անբաժան մաս Կիլիկիայի» պահանջն էին որոճում, եւ Յ․ Քաջազնունին, Ազգ․ Բիւրոյի յանձնարարութեամբ, վեց վիլայէթների ու Կիլիկիայի ապագայ քաղաքական կազմակերպութեան ծրագիրն էր մշակում․․․*

Հայկական քաղաքական շրջանները աշխատում են ամէն գնով յաջողացնել Թիւրքահայաստանի ինքնավարութեան ծրագիրը՝ ծովից ծով սահմաններով։ Այդ ուղղութեամբ տենդոտ գործունէութիւն է ցոյց տրւում Փարիզում ու Պետերբուրգում՝ առաջինում Պօղոս փաշա Նուպարը իր շուրջը ունենալով զանազան հոսանքների ներկայացուցիչներին, վերջինում՝ Պետերբուրգի Հայկական Կոմիտէն եւ Ազգային Բիւրոյի մարդիկ, որոնք կապ էին պահում արտաքին գործոց նախարարութեան հետ։

Ապրիլ 4–17–*ին Ներատովը հեռագրում է Լոնտոնի եւ Փարիզի դեսպաններին․*

---

*) *Փակագծի մէջ նշանակւում են* «Ասիական Թիւրքիայի բաժանումը» *գրքի այն էջերը, որտեղից առնուած են վաւերագրերը։*